

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն «Շաքիի միջնակարգ դպրոց» և «Բռնակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը՝ հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ

նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և

էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում **2021 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը**, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի նոյեմբերի 1-ին** ժամը 13:00-ին «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում: Հասցե՝ Սյունիքի մարզ գ. Շաքի

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ, Լյուդմիլա Մկրտչյանին: Հեռ. (077 63 27 12), էլ. հասցե shaki@schools.am: